Մրցույթի հայտարարություն

«Երևանի Հ.Կարապենցի անվան հ.6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի համաձայն՝ «Երևանի Հ.Կարապենցի անվան հ.6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ -ի կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են «Երևանի Հ.Կարապենցի անվան հ. 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ –ում 2021 թվականի նոյեմբերի 25-ից մինչև ս/թ դեկտեմբերի 15-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև ժամը 15:00, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոն և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2021 թվականի դեկտեմբերի 29-ին՝ ժամը 10:00-ին, «Երևանի Հ.Կարապենցի անվան հ.6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում, ներկայիս գործունեության հասցե՝ Նոր Արեշ 5փ, 2/3 շ:

Տեղեկությունների համար դիմել Նելլի Մկրտչի Բաղալյանին,

հեռախոս՝ 010-45-38-00 ,055-37-86-28,

էլ. հասցե՝ school6.h.k@gmail.com: